ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ № 44/45 -Լ «10» 03 2025թ.

ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 158-163-րդ հոդվածների, ՀՀ կառավարության 11.08.2005 թ. թիվ 1599-Ն ու թիվ 1384-Ն որոշումների պահանջները, ԵՊՀ ռեկտորի 2025թ. հունվարի 24-ի 14/1-Լ հրամանը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 57-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. Հաստատել ԵՊՀ աշխատողներին 2025 թվականի հասանելիք ամենամյա արձակուրդ տրամադրելու ներքոհիշյալ ժամանակացույցը.

ա) ԵՊՀ պրոֆեսորադասախոսական (ներառյալ ամբիոնների վարիչներին) և գիտական համակազմերի աշխատողներին տրամադրել 35 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2025 թ. հուլիսի 04-ից մինչև օգոստոսի 21-ը ներառյալ (35 աշխատանքային օր) ընկած ժամանակահատվածում,

բ) ԵՊՀ ռեկտորին, պրոռեկտորներին և ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին (ներառյալ բաժինների վարիչներին) տրամադրել 25 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2025 թ. հուլիսի 18-ից մինչև օգոստոսի 21-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում,

գ) ԵՊՀ գրադարանի և արխիվի աշխատողներին տրամադրել 20 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա նվազագույն արձակուրդ և 5 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա լրացուցիչ արձակուրդ՝ 2025 թ. հուլիսի 18-ից մինչև օգոստոսի 21-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում,

դ) ԵՊՀ մյուս աշխատողներին տրամադրել 20 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 2025 թ. հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 21-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետում նշված ժամանակացույցից տարբերվող այլ ժամկետներում աշխատողներին ամենամյա արձակուրդը (կամ դրա մի մասը) կարող է տրամադրվել միայն ԵՊՀ ռեկտորի հրամանով:

3. Սույն հրամանի մասին սահմանված կարգով տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ